

Դարձո՛ւր մեզի դէմքդ սուրբ,
 Ու պաշտպանող ձեռքդ ո՛վ Տէր, տարածէ՛
 Մեռելոց վրայ երէկուան եւ ողջերուն այսօրուան:
 Ըրէ՛ որ մէն մի կաթիլ այն արիւնէն
 Զոր քափեցինք մեմ գորութեամբ սուրբ սիրոյդ,
 Փոխուի հասկի մը ոսկի
 Եւ քող Մուսա լեռան վրայ,
 Ուր հինգ հազար օրհնեալներ,
 Պաշտպան եղան իրաւունքին մեր արդար
 Ժողովուրդին հայագարմ,
 Ծրլի, անի հունձֆին անհուն.
 Եւ այդ գոհի ցորենով
 Ըրէ՛, ով Տէր, որ արդարներն 'ւամբիծներն
 Հոգեղէն հացը շաղուեն,
 Որպէս զի քող անմահ ըլլայ Հայաստան:
 Օրհնէ՛ դեռ մեր որբաններն,
 Ու դէմքն անմեղ մանուկներու նորածին.
 Գիտեմք թէ դու ըստեղծած ես, Տէ՛ր, զանոնք
 Զի ըլլան հա՛ց մարդկային ապագայ նոր օրերու:
 Անոնցմով ո՛վ Տէր, գօրաւոր միշտ կամփովդ,
 Պիտի երբեք չտեսնէ մահ մեր հայրենիքն:
 Տո՛ւր որ մէն մի սիրտ նահատակ ինկածին
 Քաղաքակիրթ զարգացման համար, որուն կը հաւտանք,
 Նորոգուի քող ժառանգորդի՛մ սրտին մէջ,
 Ըստեղծելու խորհրդական միութիւն,
 Որպէս աղբիւր դիցական՝
 Որուն կեանքի մէկ շիթին ուրիշ մը նոր կ'յաջորդէ
 Ու վազող ջուրն յաւերժական ջուր կ'ըլլայ.
 Այսօր Գեմէ կը հայցեմ ի՛մ արիւնիս
 Համար, եւ ձայնս իր ողբերգին մէջ տըխուր՝
 Հայաստանի ժողովուրդին ձայնն իսկ է,
 Զոր Քեզ, Աստուած, վստահաբար կը բերեմ:

Թարգ. Ն. ՄԵՍՐՈՊ ԺԱՆԱՇԵԱՆ

ԿՈՒՍՏԱՆՎՈՅ ՊՐԵՆԱ



ՀԱՅԿԱՍՏԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԵՍՆԵՐ Ս. ՂԱԶԱՐՈՒ ԵՒ Ս. ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Վենետիկի փոքրիկ հայ դպրութիւն, —
 Հպարտ իր Ս. Ղազարով եւ Մ. — Ռ.
 Վարժարանով՝ երկուքն ալ աղջիկն սիրտն
 ու հոգին, — ամէն տարի հաճոյքը կ'ու-
 նենայ ներկայ ըլլալու աւանդական դար-
 ձած՝ բայց միշտ թարմ՝ մէկ քանի հան-
 դէսներու, որոնք այս տարի ալ զանց չե-
 ղան, այս աղետալի պատերազմին ստեղ-
 ծած դժուարութիւններու մէջ անդամ: Այդ
 հանդէսներն են ա) Թատերական ներկա-
 յացումներ Մ. — Ռ. Վարժարանին մէջ.
 բ) Միութար Աբբասօր տարեդարձին յի-
 շատակը. գ) Ամալիւրջի հանդէս Մ. — Ռ.
 Վարժարանին մէջ:

Այս տարի ալ կը բաւականանանք տալով
 նկարագրութիւնները միայն Վենետիկին
 մէջ կատարուած հանդէսներուն, չկարե-
 նալով ստանալ մեր միւս վարժարաննե-
 րուն եւ կեդրոններուն մէջ տեղի ունեցած-
 ներուն նկարագրութիւնները, թղթատարա-
 կան յարաբերութիւններու խղովմին հե-
 տեւանքով:

Ա.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Մարտ 6ին, Վարդանանց տօնին յաջորդ
 օրը, Վարժարանին Թատերասրահին մէջ
 տեղի ունեցան տարեկան ներկայացումնե-
 րը հայ եւ իտալ լեզուներով: Վարժարանի
 աշակերտութիւնը նախանձախնդիր եղած
 է միշտ այդ ներկայացումներուն, եւ յա-
 ջորդները չեն ուզած երբեք վար մնալ նա-
 խորդներէն, նկատելով Թատերական շար-
 ժումը մրցակցութենէն աւելի՝ անհրա-
 ժեշտ տարր մը դպրոցի ընկերային գուարժ
 կեանքին:

Նախադասութեամբ Ուխտիս Ընդհ. Աբ-
 բասօր՝ Գերպ. Սրապիոն Վ. Ուլուհոճեա-
 նի, պատուական Հայրերուն, եւ վանքի
 աշակերտութեան, Վենետիկի ու շրջա-
 ջակայքի հայ դպրութիւն ներկայութեան
 տրուեցաւ նախ իտալերէն լեզուով Պեր-
 թոնէի «Բրիտանիկ» կատակերգութիւ-
 նը երեք արարուածով, ուր հոռմէական
 օրերու հերոսը՝ Բրիտանիկ բեմ կու գայ
 կայսերական փառքերու եւ արարքներու
 յիշատակներով վերապրեցնելու հանդիսա-
 կանները:

Այնքան խանդ կար դերասաններու ե-
 րակներուն մէջ եւ այնքան ճարտարութիւն
 անոնց շարժումներուն տակ, որ կարելի
 չէր յաջող չանցնէր ներկայացումը: Անոնք
 անճանաչելի դարձած իրենց դիմապարզա-
 ւորութեան տակ՝ խանդավառութեան դա-
 վաթնակէտերուն ծափեր կը խլէին հան-
 դիսականներէն:

Զինճիրեան Գէորգ, տրամին հերոս Բրի-
 տանիկ, տիպար հոռմայեցի զօրավարն
 էր՝ վեհ ու ահարկու, եւ իր բացառիկ
 ու ճարտասանական խտրելնով զարմանք
 կ'ազդէր իտալական համայնքին: Եղիազա-
 րեան Զարեհ՝ լուրջ ու վճռական իր կեց-
 ուածքին մէջ՝ արժանաւայել տնօրէն էր
 Թատերասրահին: Իսկ Տէր-Պարսամեան Շա-
 ւարչ, բեմին «Բազոս»ը, միշտ կերպը կը
 գտնէր զուարթացնելու շուրջիները, բնա-
 կանաբար նաեւ հանդիսականները, երբ
 բեմին վրայ ճնշում եւ իրարանցում էր
 տեսարանը: Եւ այսպէս միւսները՝ որոնց
 մէջ գլխաւորապէս Մինաս Մինասեանը:
 Վարագոյրը իջնելուն՝ ներկաները մեծ
 հաճոյքով ունկնդրեցին երգախառն միջ-
 նարարը «Crispino e la Comara» ե-

րեք աշակերտներէ կատարուած՝ դաշնամուրի ընկերակցութեամբ: Իսկ Պ. Իգնատիոս Աստուածատուրեան այս տարի թատերաբեմէն բռն չեղտի մասին վարժապետական դասախօսութիւն մը ըրաւ իբր միջնարար, զուարթութիւն եւ քերականութիւն իրարու խառնելով:

Պահ մը հանդիստէ վերջ՝ վարագոյրը կրկին կը բացուէր եւ կը սկսէր տեղի ունենալ հայերէն լեզուով «Բարեկենդանի անկուտինները», կատակերգութիւն մը, որ կը պատկերացնէ կեանքը բարեկեան զուարճասէր ուսանողներու, որոնք ամէն զրնով ուղեւորով զուարճանալ՝ կը դիմեն ամէն միջոցի դրամ հայթայթելու համար, մինչեւ իսկ մեռնիլ ձեւանալու հնարամտութեան: Նիւթը ինքնին ծիծաղաշարժ՝ աշխոյժ պատանիներու ճարտարութեամբ՝ կատարեալ յաջողութիւն մ'եղաւ: Դերակատարներէն յիշենք մասնաւորապէս Մարտիրոս Ոսկան՝ մամիկի դերին մէջ, որ իր ձայնի, արտաքին կերպարանքի ու դէմքի յարգարումին մէջ տարբերութիւն չունէր արեւելեան ո'ւէէ մամիկի:

Երկու օր վերջ, Կիրակի, կրկնուեցան ներկայացումները խաղացի համայնքին առջեւ, որ լսած ըլլալով հայերէն գաւազտին նիւթը եւ յաջողութիւնը, փափաքեցաւ նոյնին կրկնութիւնը:

Բ

ԵՐՆՇ. ՄԻԻԹԱՐ ԱՐԲԱՆՈՐ ՅԵՇԱՏԱԿԸ

Մայիս 9-ին Ս. Ղազարու խաղաղ ու ամփոփ միջավայրին մէջ կատարուեցաւ, Մխիթար Արքայի մահուան տարեդարձին յիշատակը, որդիական երկիւղած պաշտամունքով, միշտ աւելի մօտենալու այդ մեծ հոգիին, եւ աւելի մօտէն ճանչնալու համար զայն, իր կեանքին ու զորքին մէջ: Հանդէսին կը նախապահէր Ուխտիս Ընդհ. Արքահայրը՝ Գերայ. Սրապիոն Վ. Ուլուհո-ճեան. ներկայ էին մեծարգոյ եւ պատուական Հայրերը, Վանքիս աշակերտները, Ս. - Ռ. Վարժարանի աշակերտութիւնն ու տեսչական մարմինը, եւ բարեկամներ:

Ձայնաւոր պատարագի արարողութենէն վերջ, Վանքիս զրատան զեղեցիկ սրահին մէջ տեղի ունեցաւ տարեկան գրաբար ճառախօսութիւնը, զոր այս տարի ալ շատ յաջող ու զեղեցիկ կերպով ըրաւ Պ. Հ. Աւետիք Թալաթիեան, նիւթ ունենալով, «Մխիթար եւ Արուսեակ նորին — Մխիթար եւ իր Արուսեակը»:

Նպատակն էր ցոյց տալ թէ ինչպէս Մխիթար՝ ազգը փրկելու զորքին մէջ իր առաջնորդն ու քաջալեր ունէր՝ Տիրամայրը:

Առաջին մասին մէջ նկատեց Մանուկ Մխիթարի մէջ Ս. Կուսին հովանաւորութիւնը, մայրական խնամքը, պատրաստելու համար զայն հայ ազգին ապագայ առաքեալը:

Երկրորդ մասով մատնանչեց թէ ինչպէս Տիրամայրը ներութեան ու վշտի դաւադանով կրթեց պատանի Մխիթարը. թոյլ տալով որ ամէն փորձանք պատահի իրեն ու կեանքի ծովուն մէջ ալեծփի Հայաստանի փրկութեան յոյսը: Սակայն եւ այնպէս չղաղբեցաւ մայր մը ըլլալէ ու Մխիթարը փրկեց ամէն վտանգէ:

Երրորդ մասը նուիրած էր Աստուածամօր «Եղիցի»ին. որով երիտասարդ Մխիթարի մտքին ու սրտին մէջ ապրող Տիրամայրը մարմին կ'առնէր այլեւս ու ճշմարիտ, չօչափելի ու փայլուն վարսամի մը պէս կ'առաջնորդէր անդունդներու եւ դահալէժներու ընդմէջէն: Ան էր որ Մխիթարը ազատեց մահուան ճանկերէն՝ մինչ ջերմախտով կը տուայտէր Կիպրոսի մէջ. ան էր որ մաքրասէր Մխիթարը ամբիժ կը պահէր: Այդ Արուսեակն էր որ Մխիթարի մտքին մէջ միշտ լուսաւոր ու արծարծուն կը պահէր Հայ ազգը ձերբազատելու դադափարը, եւ անոր ձեռքէն բռնած կ'ուղղէր զայն քայլ առ քայլ եւ կը մատնանչէր հայ ժողովուրդին կարօտութիւնները:

Ու Մխիթար վստահ իր առաջնորդին վրայ՝ կը քալէր անստերիւր իր ճամբան, մինչեւ հասաւ 1701 թուականին անմահ զիշերը. ու Տիրամօր պաշտպանութեամբ, ճրագի մը ազօտ լոյսին տակ, հիմը դրուե-

ցաւ Մխիթարեան Մխարանութեան: Երկնային Վարսամին զորքը վերջացած էր տակաւին. Մխիթար փախստական ինկաւ Մեթոն եւ անկէ տասնըհինգ տարի վերջ Մխիթարի լուսաւոր Աստղը՝ կանգնեցաւ հաստատուն Ս. Ղազարի երկնակամարին վերեւ:

Ճառախօսը հասած էր արդէն իր նպատակին, ուստի անցաւ եզրակացութեան, թէ ինչպէս երբեմն Հայ ազգին զարթոնքը եղած էր Տիրամօր հոգածութեամբ՝ Մխիթարի ձեռքով, այսպէս այսօր դարձեալ Հայութիւնը պիտի փրկուի Տիրամօր բարեխօսութեամբ ու Մխիթարի դադափարականին հետեւելով եւ զործելով անոր պէս:

Ով որ կ'ուզէ — ըսաւ ան — անկախ ու երջանիկ Հայաստան մը տեսնել, թող սորվեցնէ Հայ նոր սերունդին՝ ճանչնալ ու սիրել Ս. Կոյսը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ս. Ներսէս Շնորհալիի եւ Մեծն Մխիթարի այնքան սիրելի Տիրամայրը:

Ճառախօսէն վերջ խօսք առաւ Ուխտիս Գերայ. Արքահայրը՝ իր հայրական սրտով հոգեբուխ վերջաբանն ընելու:

Գ

ԱՄՍՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ
Ս. - Ռ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Մայիս 30ը եկաւ փակելու այնքան զոհողութիւններով բեռնաւորուած ուսումնական տարեշրջան մը: Եօթը շրջանաւարտներու երջանիկ օրն էր, որուն սպասեր էին վեց երկար տարիներ շարունակ:

Այս տարուան հանդէսը ընտանեկան բընոյթ ունէր, ներկայ միջազգային պատեհողմին պատճառաւ: Դպրոցի Քայլերգով ողջունուեցան հանդիսականները եւ յետոյ շրջանաւարտներէն մին Եդ. Պողոսեան՝ հրաժեշտի ողջոյնը տուաւ իր սիրական վարժարանին եւ ընկերներուն տոհմային լեզուով, ինչպէս Եդ. Գէորգեան՝ նոյն ազգի զգացումներու արտայայտութիւնը բերաւ խաղերէն լեզուով:

Յարութիւն Ալեքսանեան՝ կրտսերներէն մին, «Երթաք բարեալ»ի ուղերձն ըրաւ

Եօթը մեկնող ուսանողներուն:

Դեռ ծափերը կը հնչէին երբ ինքնաբերարար ոտքի ելաւ արեգաբոյ թշկապետ բրոֆ. Արսլան, Ս. - Ռ. Նախկին սան, որ յուզուած ու անկեղծ վերջնաժներ ըրաւ իր մանկութեան օրերուն. յիշեց թէ ինքն ալ խաղացած էր այս պարտէզին մէջ, ճաշած նոյն ճաշարանին մէջ եւ հուսկ պըճաւ ուսումնական մէջ: Փայլուն սակուած նոյն դահլիճին մէջ: Փայլուն ասպարէզ ու արդիւնաշատ տարիներ մաղթեց մեկնող երիտասարդներուն, յարատեւութիւն՝ մնացողներուն:

Թէեւ Բրոֆ. Արսլանի խօսքերը աւելի տղոց ուղղուած էին քան ուրիշներու, սակայն անոնք ողբերգեցին մինչեւ իսկ Վեետիկի դաւառին Ուսումնապետ Բրոֆ. Հրամ. Օրէսթէ Բոսսի, որ հակառակ իր սակաւախօս բնաւորութեան՝ ոտքի կանգնեցաւ ու ներկաներուն դառնալով զովեց Հաստատութիւնս, ծերունազարդ մեր Սանը, Հայերն ու Իտալիան:

Անդրանիկ Էպեյեան Եթովպահայ պատանեակը, իրեն յատուկ համարձակ եւ խանդոտ ոճով՝ արտասանեց Վարժարանէն յարմարեցուած «Ողջերթը»:

Ախորժով ունկնդրեցինք միջանկեալ երգեր Պեթովենէն, Փոնցիլաբուայէն, Վիվալտիէն, Բուչինիէն ու Կոմիտաս Վարդապետէն:

Վարժարանիս Ուսումնապետը Հ. Եսայի Գոռլեան, Տեսչութեանս կողմէն համառօտ ուսումնական տեղեկատուութիւնն ըրաւ, յիշելով միանգամայն դպրոցական տարեշրջանին մէջ տեղի ունեցած կարեւոր մանրամասնութիւններ Վարժարանիս կեանքէն: Ու ապա անցաւ վկայականներու բաշխումին:

Աւարտողներու մեծամասնութիւնը Ատիս-Ապեպայի դաղութէն էր: Աւա՛ղ, կը պակսէին անոնց կարօտալից ծնողները բիւպակսէին անոնց համար օրուան ուրախութիւնը եւ դրոշմելու անոնց ճակատին դոհունակութեան համրոյրը:

Ընտանիքներու փոխան մեծարգոյ վարդապետներ ու մեծապատիւ պարոններ ու տիկիներ կատարեցին վկայականներն յանձնելու ուրախալի պաշտօնը:



ԻՄՐԱՅԷԼԵԱՆ ՍԱՐԳԻՍ
ՇԱՆԻ ԱԼՊԷՐ
ՊՕՂՈՍԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ
ԻՄՐԱՅԷԼԵԱՆ ԳԵՈՐԳ
ԳԵՈՐԳԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ
ՊՈՏԻԿԵԱՆ ԳՐԻԳՈՐ
ԹԵՐԶԵԱՆ ԱՐՇԱԽԻՐ

Ծն. Ատախ-Ապեպա
» Թիրանա
» Ճաւա
» Ատախ-Ապեպա
» Ատախ-Ապեպա
» Տուրացցոյ
» Ատախ-Ապեպա

1926	Մուտքի վարժարան	1938
1923	»	1938
1924	»	1939
1927	»	1938
1924	»	1938
1924	»	1937
1924	»	1937

Ապա մրցանակներ բաժնուեցան, իւրաքանչիւր դասարանի քաջագոյն երեք աշակերտներուն:

Ե. դասարանէն

Ա. Աւետիք Յակոբեան
Բ. Մինաս Մինասեան
Գ. Յովհաննէս Աղամեան

Դ. դասարանէն

Ա. Գեորգ Սաղամեան եւ Կարապետ Աւագեան
Բ. Ոսկան Մարտիկեան եւ Յակոբ Հաղխեան
Գ. Նշան Սաղամեան

Ա. դասարանէն

Ա. Վարդան Աստուածատուրեան
Բ. Հենրիկոս Միքայէլեան
Գ. Նուրհան Սարեան

Այս տարի բարի վարքի ունի մետալին արժանացած էր Անդրանիկ Անդրանիկեան պատանին, իսկ արծաթին՝ Ոսկան Մարտիկեան:

Վարդան Աստուածատուրեանի զգայուն «Խալիլ» արտասանութենէն ետքը՝ բեմ ելաւ Վարժարանին ուսուցիչը իտալերէն լեզուի եւ գրականութեան Գերյ. Աթթիլիոյ Տելուքայ, որ ներկայացնէին վերջ Տեսչութեան իր անկեղծ մաղթանքները նորահաս հունձքին համար, սրտաբուխ չը նորհաւորութիւններ ըրաւ չըջանաւարտներուն:

Հ. ԱԻՏԻՖ ԾՈՎԵԱՆ



Ս. ՂԱԶԱՐՈՒ ՆՇԱՆԱԽՈՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ 1940, 1941, 1942 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

27 Փետրուար 1940

Luisetti Franco, Ամդամ Դտալ. Ծերակուտի, Միլանէն:

30 Ապրիլ 1940

«Regi Conservatori Riuniti»-ի վարչութիւնը, Միլանէն:

4 Մայիս 1940

C. Argotoianu, Նախագահ Ռումանական Ծերակուտի, Պուրէշէն:

27 Յունիս 1940

Aspasia և Alexandra, Արքայական իշխանութիւններ Յունաստանի, Կոմս Giuseppe Volpi, պետական մախարար Դտալիոյ:

Յուլիս 1940

Rinaldo Mezzasoma, իտալացի փոխ-մախարար, իր Տիկնոջը հետ, Guglielmo Pinsero, վերահսկող վիճակեան բանտերու:

24 Սեպտեմբեր 1940

«Cavalleri Mercedari»-ի վարչ. խումբը:

17 Հոկտեմբեր 1940

Զօրավար, Մարքէզ Saibante Egidio և Տիկնիւն, ծննդովայէն, Michele Adiroffi, ամդամ Դտալ. Ծերակուտի, ընտանեօք. Հոմմէն:

20 Մարտ 1941

Զօրավար Arturo Cerrato.

3 Յունիս 1941

Կոմսուհի Francesca Emo Capodilista, իր թոռնիկներով, Բատուայէն:

18 Յունիս 1941

Maria Fuchs Giovanelli, Baronessa, Միլանի իտալ. կառավարութեան մօտ:

22 Յուլիս 1941

Giovanni Giorgi, Ամդամ Դտալիոյ և Պապական ծննդանոցներու:

29 Յուլիս 1941

Հիմնադիր և Մեծաւորուհի Regina Apostolorum կոչուած մայրապետներուն, Վենետիկէն:

30 Յուլիս 1941

Զօրավար Pier Luigi Bardella, Վենետիկէն:

31 Յուլիս 1941

John Malcolm և N. Malcolm, Միլանի խանութի հղբօրորողները:

1 Օգոստոս 1941

Հրամանատար, ժարտարագէտ Nogara Bernardino, վատիկանեան թանգարաններու վերատեսուհի, Տիկնոջը հետ:

10 Օգոստոս 1941

Luigi Gabrielli, Արքուհի լիազօր դեսպան, Ֆիլինցէն:

18 Օգոստոս 1941

Vaccari Marcello, Կուսակալ վիճակեան:

20 Օգոստոս 1941

Francesco Casiccia, Ամդամ Ազգային Խորհրդարանի, ընտանիքով, Հոմմէն:

31 Օգոստոս 1941

Prof. Tucci, Ամդամ Դտալ. Պետական ծննդանոց:

11 Սեպտեմբեր 1941

Մարքիզուհի Margherita Ferrero di Cambiano.

19 Սեպտեմբեր 1941

Georg. Von Mackensen, Գերմանիոյ դեսպան իտալ. կառավարութեան մօտ: